## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Քասախի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **Քասախ համայնքի «Սգո» հանդիսությունների սրահի կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման** նպատակով կազմակերպված ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/03 ծածկագրով գնման ընթացակարգի
ընթացակարգի ծածկագիրը

արդյունքում 2019 թվականի հուլիսի 8-ին կնքված N ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/03 պայմանագրում
պայմանագրի կնքման տարեթիվը և ամսաթիվը պայմանագրի համարը

2019թվականի հոկտեմբերի 4-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվու-
փոփոխությունը կատարելու մասին երկկողմ հաստատված փաստաթղթի տարեթիվը և ամսաթիվը

թյունը և կատարված փոփոխությունը պարունակող երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ**՝ N1 նախագծով չնախատեսված լրացուցիչ աշխատանքների կատարում,

***Փոփոխության նկարագրություն*** ՝

1. Հաշվի առնելով պայմանագրի նախահաշվով չնախատեսված աշխատանքների լրացուցիչ ծավալների անհարժեշտությունը, այսուհետ՝ աշխատանքներ, փոխադարձ համաձայնությամբ Կողմերը կատարում են N **ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/03** պայմանագով սահմանված աշխատանքների 10%-ի փոփոխություն համաձայն հավելված 1-ի:

2. **Պայմանագրի 5.1.կետը փոփոխել և խմբագրել հետևյալ կերպ՝**

*5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է* 11.863.156 ***(տասնմեկ միլիոն ութ հարյուր վաթսուներեք հազար մեկ հարյուր հիսունվեց հազար)*** *ՀՀ դրամ, որից 2.372.631* ***(երկու միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար վեց հարյուր երեսունմեկ)*** *ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:*

*3.* Պայմանագրի N 1 և 3 հավելվածների անբաժանելի մասն է կազմում սույն համաձայնագրի N 1 և 3 հավելվածները՝

**4.** Սույն համաձայնագիրը հանդիսանում է № ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/03 պայմանագրի անբաժանելի մասը:

5. Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

6. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

7. Սույն Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

***Փոփոխության հիմնավորում***

2019թվականի հուլիսի 8-ին ստորագրված **Քասախ համայնքի «Սգո» մանկապարտեզի կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման** *N* **ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/03** պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը և ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «**Գնումների գործընթացի կազմակերպման**» կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետը:

Պատվիրատու` Քասախի համայնքապետարան

07.10.2019թ.